

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«08» հունվար 2020թ.

No 07 - Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
«ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԲԱԺՆԻ «ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ
ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ», «ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԵՎ «ՍՐՏԻ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ
ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐՈՒՄ/ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԳՐԿՎԱԾ
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱՅՈՎ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի
հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ
կետի 20-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004
թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի
«Առողջապահություն» բաժնի «Ձինծառայողներին, ինչպես նաև փրկարարական
ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության
ծառայություններ», «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» և
«Սրտի անհետաձգելի վիրահատություններ» ծրագրում/ծրագրերում ընգրկված
շահառուներին ծառայություններ մատուցելու վերաբերյալ» հրապարակային օֆերտայով

բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկը (այսուհետ Ցանկ)՝ համաձայն հավելվածի:

2. Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարող Լուսինե Քոչարյանին՝

կազմակերպել սույն հրամանով հաստատված Ցանկի տեղադրումը առողջապահության նախարարության <http://www.moh.am/> կայքում:

3. Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետ Ծաղիկ Վարդանյանին՝

սույն հրամանի 1-ին կետով հաստատված Ցանկում ընդգրկված կազմակերպությունների հետ աշխատանքները կազմակերպել համաձայն առողջապահության նախարարի հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի «Զինճառայողներին, ինչպես նաև փրկարարական ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության ծառայություններ», «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» և «Սրտի անհետաձգելի վիրահատություններ» ծրագրում/ծրագրերում ընգրկված շահառուներին ծառայություններ մատուցելու վերաբերյալ» հրապարակային օֆերտայով կնքվող օրինակելի պայմանագրի դրույթներին համապատասխան:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Արտյոմ Սմբատյանին:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ